Այբ դպրոց

2019
2020

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

WWW.AYBSCHOOL.AM

ՏԱՐԻՆ՝ ԳՈՐԾԵՐՈՎ 01

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ 03

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ 05

- Կրթական ծրագիր. Արարատյան բակալավրիատի սկզբունքները
- Առարկայացանկ և նախագծային ուսումնառություն

ՀԱՄԱՅՆՔ. ՄԻՋԱՎԱՅՐ ԵՎ ՄԱՐԴԻԿ 15

- Հոգաբարձուների խորհուրդ
- Խորհրդատվական խորհուրդ
- Ուսուցիչներ և անձնակազմ
- Աշակերտներ
- Ծնողներ
- Շրջանավարտներ

ԴՊՐՈՑԻ ԿՅԱՆՔԸ 29

- Իրադարձություններ
- Հանդիպումներ
- Նվաճումներ
- Կարևոր փաստեր
- Վիճակագրություն

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 39

ԿՐԹԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ 41

ԻՆՉՊԵՍ ԱՋԱԿՑԵԼ ԴՊՐՈՑԻՆ 43

ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ 46

տարին՝ գործերով

«Այբ» դպրոցն ունենալու է փայլուն ապագա, էլ ավելի ոգևորիչ և պայծառ ...

ԱՐԱՄ ՓԱԽՉԱՆՅԱՆ
«Այբ» դպրոցի գործադիր տնօրեն

Լինում են շրջադարձային տարիներ: Լինում են օրեր, երբ ամեն բան խառնվում է իրար, և ապագան դառնում է մշուշոտ, ծածկվում է անորոշության շղարշով: Ցանկացած այլ կառույցի համար դա կլիներ մեծ փորձություն, բայց ոչ՝ դպրոցի: Իսկական դպրոցը պետք է բերկրանք ապրի, երբ իր առջև խնդիրներ են ծառանում: Պետք է ուրախանա և ոգևորվի կտրուկ փոփոխությունների պահին, քանի որ կրթության իմաստը հենց դրանում է՝ լինել մշակույթը դեպի ապագան տանող նավը, որը չունի նավահանգիստ, և որի փարոսը ոչ թե անցյալում է, այլ՝ մշտապես ապագայում:

Անցած ուսումնական տարին կարծես չէր խոստանում որևէ անակնկալ: Բայց անակնկալը հենց նրանով է այդպիսին, որ այն ի հայտ է գալիս առանց խոստման: Այն թակում է քո դուռը, դառնում քո կյանքի մասը և պարտադրում մտածել, ստեղծագործել, փոխվել և կատարելագործվել:

Փորձությունները նման են անձրևի. առաջին հայացքից դրանք անախորժ են, սակայն անհրաժեշտ են զարգացման համար, ինչպես անձրևը՝ պարարտ հողին, որպեսզի նոր ծիլեր տա և նոր կյանք սկսվի: Այդ անակնկալ «անձրևը» եկավ ձմռան ավարտին՝ աչքի համար անտեսանելի վտանգավոր թշնամու տեսքով, պարտադրելով բոլորին անցնել առցանց կրթության, փակելով բազմաթիվ դռներ և անգամ ամբողջ երկրներ: Եվ այդ դժվար օրերին մեզանում ավելի ամրացավ ձգտումը ստեղծելու մի նոր կրթական իրականություն, որի համար չեն կարող խոչընդոտ լինել ո՛չ փակ ճանապարհները, ո՛չ հեռավորությունները: Այն պիտի առաջ գնա 21-րդ դարի ճանապարհներով, որոնք կապում են վիրտուալ աշխարհը իրական աշխարհի հետ, և որոնցով է ընթանալու մարդկության ապագա զարգացումը:

Հայ ազգի համար, որը համասփյուռ է և միաժամանակ՝ կենտրոնացած իր հայրենիքում, շատ կարևոր է հնարավորինս արագ հաստատվել այս նոր իրողության մեջ, դարձնել այն իր գոյության, զարգացման և, հետևաբար, կրթության մասը: «Այբ»-ը մեծ քայլերով գնում է առաջ այդ նոր աշխարհում կատարելով զարմանալի բացահայտումներ, հաղթահարելով խոչընդոտներ, բայց նաև ստեղծելով և զարգացնելով այդ աշխարհը: Մենք հայտնվել ենք կարծես մի համակարգչային խաղում, ուր մենք ենք ստեղծում կանոնները և մենք ենք բացում ուղիները:

Կարծում եմ մենք փայլուն ամփոփեցինք այս դժվարին տարին: Դրանում մեծ ավանդ ունեցան դպրոցի բոլոր ուսուցիչները և աշխատակիցները, մեր աշակերտները և նրանց ծնողները: Այս հաջողությունն անհնարին կլիներ առանց մեր բարերարների շարունակական աջակցության, որն առանձնապես որոշիչ էր և միաժամանակ ոգևորիչ՝ համավարակով պայմանավորված տնտեսական բարդ դրության պայմաններում: Մի խոսքով՝ այս հաղթանակը պատկանում է մեր ողջ համայնքին:

Եվ այստեղ նորից պետք է արտահայտեմ այն նույն միտքը, որը հնչեցրել եմ բազմիցս. մարդկության ստեղծած ամենապայծառ, ամենաոգևորիչ և կայուն երևույթը մի գաղափարի շուրջ համախմբված մարդկանց համայնքն է, որն ամրոցի պես պարսպում է իր մեջ բարձրագույն արժեքներ, տալիս իր անդամներին կայուն աջակցության միջավայր, սակայն նաև բաց է դեպի աշխարհ, դեպի նոր իրողություններ և նոր փորձառություններ: «Այբ» դպրոցի համայնքը հենց այդպիսին է, և դա մեր ամենամեծ ձեռքբերումն է: Պատիվ է պատկանել այդ համայնքին, և հատուկ պատիվ է եղել ինձ համար վերջին վեց տարիների ընթացքում լինել դպրոցի առաջնորդը և այդ դերում պատասխանատվություն կրել դպրոցի համար՝ ամբողջ համայնքի առջև:

Այս տարին ևս մեկ անգամ համոզեց մեզ, որ «Այբ» դպրոցն ունենալու է փայլուն ապագա, էլ ավելի ոգևորիչ և պայծառ: Համարձակ գնանք դեպի այդ ապագան, բացենք նոր դռներ և բացահայտենք նոր ճանապարհներ. դա է առաջնորդ դպրոցի առաքելությունը:



պատմություն, առաքելություն

Համապատասխան միջավայր

եզակի կրթական տեխնոլոգիաներ
կրթության բարձրագույն ճեղքբերումներ

75% կրթաթոշակ ամեն տարի

«Այբ» դպրոցը վաղուց արդեն իր ուրույն տեղն ունի հայկական կրթական համակարգում: «Այբ»-ի սովորելու միջավայրը համապատասխանում է 21-րդ դարի ոգուն և պահանջներին: «Այբ»-ում ազգային հիմքի վրա մշակվում են եզակի կրթական տեխնոլոգիաներ և փորձարկվում ժամանակակից կրթության բարձրագույն ձեռքբերումները՝ նպաստելով հայկական կրթության մրցունակության մեծացմանը: «Այբ» դպրոցի նպատակն ու առաքելությունը ոայալ, առաքինի, պատկանելության և պատասխանատվության զգացում ունեցող երիտասարդների սերունդներ ձևավորելն է:

«Այբ» դպրոցը նաև յուրօրինակ լաբորատորիա է՝ դասավանդման ու ուսումնառության լավագույն տեխնոլոգիաների ու մեթոդաբանության մշակման և կրթական համակարգերի ստեղծման համար:

«Այբ» դպրոցը բացվել է 2011 թվականին «Այբ» կրթական հիմնադրամի կողմից՝ կրթության գաղափարի շուրջ միավորված հարյուրավոր բարերարների ֆինանսական աջակցությամբ: «Այբ» դպրոցը կարգավիճակով հիմնադրամ է (պաշտոնական անունը՝ «Այբ կրթական հանգույց» հիմնադրամ) և հասարակական կառույց: Դպրոցը ղեկավարվում է հոգաբարձուների խորհրդի կողմից, չունի սեփականատերեր ու բաժնետերեր:

«Այբ» ավագ դպրոցը ոչ պետական ոլորտում առաջին սոցիալական ծրագիրն է Հայաստանում, և աշակերտների ավելի քան 75%-ն ամեն տարի ստանում է կրթաթոշակ (ուսման վարձի փոխհատուցում):

«Այբ» կրթական ավան

Կրթության ծարտարապետություն

Արարատյան բակալավրիատ և սկզբունքներ

12-ամյա կրթություն՝ տարրական՝ 1-4-րդ,
միջին՝ 5-9-րդ և ավագ՝ 10-12-րդ դասարաններ

Արարատյան բակալավրիատի փիլիսոփայությունը
խարսխված է ութ սկզբունքների վրա:

«Այբ» դպրոցը 12-ամյա է՝ տարրական (1-4-րդ դասարաններ), միջին (5-9-րդ դասարաններ) և ավագ (10-12-րդ դասարաններ) բաղադրիչներով: «Այբ»-ում դասավանդումը կատարվում է «Արարատյան բակալավրիատ» (ԱԲ) հայկական կրթական ծրագրով, որը մշակվել է «Այբ» կրթական հիմնադրամի կողմից:

ԱԲ-ը համաշխարհային մակարդակով մրցունակ ուսումնական ծրագիր է, որի շնորհիվ հայ երեխաները, սովորելով հայկական դպրոցներում, հայերենով, ստանում են միջազգային բոլոր խստապահանջ չափանիշներին համապատասխան որակյալ կրթություն: ԱԲ-ի ավարտական հավաստագիրն ընդունելի ու ճանաչելի է թե՛ տեղական, թե՛ միջազգային բուհերի կողմից:

Արարատյան բակալավրիատի փիլիսոփայությունը խարսխված է ոգի սկզբունքների վրա, որոնք արտահայտում են ԱԲ-ի դպրոցների ինքնությունը և ապահովում կրթական ծրագրերի իրականացման արդյունավետություն, մարդկային փոխհարաբերությունների ներդաշնակություն, սովորելու առողջ միջավայր և համայնքաշինական արժեքների սերմանում:

1 ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2 ԽՈՐԱՑՈՒՄ

3 ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

4 ԱՇԽԱՏԵԼՈՒ ԱՐՎԵՍՏ

5 ԱՐԺԵՔՆԵՐ

6 ՀԱՄԱՅՆՔ

7 ՄԻՋԱՎԱՅՐ

8 ԳՆԱՀԱՏԱՆՔ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱԲ-Ն ամբողջական կրթության ծրագիր է: ԱԲ-ի նպատակը համակողմանի զարգացած, հոգեպես հարուստ և առողջ անհատների ձևավորումն է:

ԽՈՐԱՑՈՒՄ

ԱԲ-Ն ընձեռում է յուրաքանչյուր առարկա խորությամբ ուսումնասիրելու հնարավորություն՝ առանց խախտելու կրթության համակողմանիության սկզբունքը:

ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մարդու ստեղծագործական ներուժի արթնացումն արդյունավետ կրթության հիմքն է: ԱԲ-ը ձևավորում է այնպիսի միջավայր, որում սովորողները ճանաչելով ստեղծում են և ստեղծելով ճանաչում՝ ներգրավվելով տարբեր առարկայական և միջառարկայական ծրագրերում:

ԱՇԽԱՏԵԼՈՒ ԱՐՎԵՍՏ

ԱԲ-ի կրթական միջավայրն իր կրթական ռեսուրսներով, խորհրդատվական համակարգով, տեխնոլոգիական լուծումներով նպաստում և տրամադրում է աշխատանքի, ակտիվության և արդյունավետության:

ԱՐԺԵՔՆԵՐ

ԱԲ-Ն արժեքներ գնահատող և սերմանող ծրագիր է: ԱԲ-ի նպատակն է՝ ձևավորել ոչ միայն գիտելիքներով զինված մարդ, այլև բարոյապես մաքուր, սեփական ինքնությանը հաղորդ, պատկանելության և պատասխանատվության գիտակցություն ունեցող քաղաքացի:

ՀԱՄԱՅՆՔ

ԱԲ-ը համայնքաշինական առաքելություն է: ԱԲ-ի ամենամեծ հարստություններից մեկը նրա շուրջ համախմբված մարդիկ են: ԱԲ-ը միավորում է կրթությամբ կայացած և կրթության մեջ ներդրում կատարելու ցանկություն ունեցող մարդկանց, ովքեր պատրաստ են նոր սերնդին կրթությամբ իրագործվելու հնարավորություն տալու պատասխանատվություն ստանձնելու:

ՄԻՋԱՎԱՅՐ

ԱԲ-ը ձգտում է ստեղծելու այնպիսի գաղափարական, ժամանակակից և հագեցած միջավայրեր, որոնք համակում են ապագայի հասանելիության զգացումով, բացում մարդու ներուժը՝ տրամադրելով սովորելու և արարելու:

ԳՆԱՀԱՏԱՆՔ

ԱԲ-ի դպրոցն արժևորման, հարգանքի և շնորհակալության միջավայր է:

«Այբ» դպրոցի փիլիսոփայությունն ամփոփված է դպրոցի նշանաբանում «Իմա եւ արա», գրաբարից թարգմանաբար՝ «Հասկացի՛ր և արա՛»: Այս երկու սկզբունքները խորապես փոխկապակցված են, այսինքն՝ չկա ճանաչողություն առանց իրագործման, ոչ էլ արարում՝ առանց իմացական ձեռքբերման: Այս երկուսի համադրությունը մեր կրթական փիլիսոփայության «ոսկե կանոնն» է:

Արարատյան բակալավրիատ

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ

	ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ	ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ	մայրենի խոսքի մշակույթ	հայոց լեզու գրականություն մայրենի
ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ	անգլերեն ռուսերեն	անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն, իսպաներեն, գերմաներեն
ՃՇԳՐԻՏ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	մաթեմատիկա, համակարգչային գիտություն	հանրահաշիվ, երկրաչափություն, մաթեմատիկա (5-րդ և 6-րդ դասարաններ), ՏՀՏ, ինֆորմատիկա
ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ	գիտություն	կենսաբանություն, քիմիա, ֆիզիկա, աշխարհագրություն, բնագիտություն

	ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ	ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑ
ՀԱՅՈՑԼԵԶՎԻ ՄԱՏԵՍԹՈՒՄՈՒՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		հայոց պատմություն համաշխարհային պատմություն
ԱՐՎԵՍՏՆԵՐ	կերպարվեստ, երաժշտություն, պարարվեստ	պար, երաժշտություն, գծագրություն, կերպարվեստ, տեխնոլոգիա, բեմարվեստ, երգչախումբ
ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆԸ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ	մարմնակրթություն	մարմնակրթություն
ԽՄԲԱԿՆԵՐ ԵՎ ՆԱԽԱԿՈՇՈՒՄՆԵՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ	շախմատի, ռաներենի, անգլերենի, ֆրանսերենի, խոսակցական ֆրանսերենի, զարգացնող խաղերի, պարի, թատրոնի խմբակներ, անգլերենի խմբակ, ռոբոտիկայի խմբակ, «Հմուտ ձեռքեր», սեղանի խաղերի, սպորտային խաղերի, լողի խմբակներ, դասապատրաստում	ՆՀՊ և առաջին բուժօգնություն, շախմատ, խոսակցական ֆրանսերեն, մեդիա ակումբ, ռոբոտիկայի խմբակ, գիտության խմբակ, մյուզիքլ / բեմի ձևավորում / թատերախումբ / պարարվեստ / երգչախումբ, սպորտային խաղերի՝ լողի, բասկետբոլի խմբակներ, դասապատրաստում

ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ

Հայագիտական առարկաներ	հայոց լեզու, հայ գրականություն, հայոց պատմություն
Միջազգային լեզու	անգլերեն
Մարմնակրթություն և նախնական զինվորական պատրաստություն (ՆԶՊ)	մարմնակրթություն ՆԶՊ[1]
Մաթեմատիկա	մաթեմատիկա[2] (վիճակագրություն, հավանականություն) և երկրաչափություն
Բնագիտական առարկաներ[3]	Ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն

1 Նախնական զինվորական պատրաստության դասընթացն իրականացվում է ուսումնառազմական բանակում:

2 Համատեղ հավաստագրվում է նաև Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնի կողմից:

3 Համատեղ հավաստագրվում է նաև Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնի կողմից:

Հասարակագիտական առարկաներ	համաշխարհային պատմություն, գործարարություն, հասարակագիտություն, աշխարհագրություն
Օտար լեզուներ	ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն
Արվեստ	տեսողական արվեստ, բեմարվեստ, արվեստի պատմություն, պար, երգչախումբ, նվագախումբ
Նախագծային ուսումնառություն (ակումբներ)	մտածողության հմտություններ, «Արվեստանոց» (կերպարվեստ), Ինժեներական (ռոբոտաշինություն), «Տեխնոշարժ» (ծրագրավորում), «Մոբի ստուդիո» (մեդիա արտադրություն), «Ռոքեստր» (նվագախումբ), «կանաչ քիմիա» (քիմիա), FB (լուսանկարչություն), Film Factory (ֆիլմարտադրություն), ֆոնդահայթայթման (դրամահավաքի հմտություններ), բիոինֆորմատիկայի (կենսաբանություն և ՏՏ), ծրագրավորման (ՏՏ)

* «Այբ» ավագ դպրոցում մի շարք առարկաներ դասավանդվում են ստանդարտ և խորացված մակարդակներով:

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ

ԱԲ-ի առարկայացանկի տարբերակիչներից է նախագծային ուսումնառությունը (project-based learning), որն «Այբ» դպրոցում 2015 թ. ներդրված նորարարական կրթական մոդել է՝ հիմնված «սովորել գործելով» սկզբունքի վրա: Այն կառուցում է ուսումնառությունը նախագծերի շուրջ: Այս ծրագրի շրջանակում աշակերտները կազմում են թիմեր և իրականացնում մեծածավալ երկարաժամկետ նախագծեր, որոնք ուղղված են իրական համայնքային խնդիրների լուծմանը: Նախագծերի իրականացման արդյունքում զարգանում են աշակերտների մի շարք կարևորագույն հմտություններ՝ թիմային աշխատանքը, բիզնես մտածելակերպը, պատասխանատվությունը, աշխատանքի պլանավորումն ու բաշխումը, ժամանակի կառավարումը, առաջնահերթությունների որոշումը և այլն: Նախագծային ուսումնառության շնորհիվ աշակերտները, փորձելով սեփական ուժերն այս կամ այն ոլորտում, հաճախ կողմնորոշվում են նաև ապագա մասնագիտության ընտրության հարցում:

ՏԱՐԻՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲՆԵՐՈՒՄ

2019-2020 ուսումնական տարում ձևավորվեց նախագծային ուսումնառության 11 ակումբ: Համավարակի պատճառով նախագծերի շնորհանդեսների մեծ մասը տեղի ունեցավ առցանց, որոշ նախագծերի վերջնաժամկետներ երկարաձգվեցին:

«ՌՈՔԵՍՏՐ» ակումբը թողարկեց հարմոնիայի մասին ուսումնական փոդքաստներ:

«ՖՑ» ակումբը շրջակա միջավայրի աղտոտվածության մասին բարձրաձայնեց վիրտուալ ցուցահանդեսի միջոցով:

«ՄՈԲԻ ՍՏՈՒԴԻՈՆ» ներկայացրեց հեռախոսով նկարված սոցիալական հոլովակներ:

ՖԻԼՄԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ակումբը կազմակերպեց առցանց հանդիպումներ հայկական մշակույթի «թաքնված գանձերի հետքերով»:

«ԿԱՆԱՉ ՔԻՄԻԱ» ակումբը ներկայացրեց կենսաֆիլտրի, կենսապլաստիկի սարքի և VR ակնոցի ստեղծման առաջին արդյունքները:

«ԱՐՎԵՍՏԱՆՈՑ» ակումբը ներկայացրեց երևանյան անհայտ արձանների փոխգործուն քարտեզ:

ԲԻՈԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ակումբն ամփոփեց ԴՆԹ տեղեկատվային կրիչի ստեղծման նախագծի առաջին փուլը:

ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ակումբը ներկայացավ «Ադ Աստրա» թռչող սարքի ծրագրավորման, ինքնակառավարվող մարտական ռոբոտների եռաչափ մոդելավորման նախագծերով:

ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ ակումբը թողարկեց երևանյան երթուղիները ցույց տվող «Բոլոլա» հավելվածը:

ՖՈՆԴԱՀԱՅԹԱՅԹՄԱՆ ակումբն իրականացրեց «Արվեստանոց» ակումբի «Տեսողական պոեզիա» գրքի համար ֆոնդահայթայթման արշավ:

«ՏԵԽՆՈՇԱՐԺ» ակումբը ծրագրավորեց «ԱյՖՍՏ» բջջային հավելվածի արտաքին տեսքը և պատրաստեց «Քաղաքանդակ» նախագծի կայքը:



«Այբ» համայնք.
Միջավայր և մարդիկ

Ուսուցիչներ, աշակերտներ,
շրջանավարտներ, անձնակազմ

ՄԻՋԱՎԱՅՐ

«Այբ» կրթական հանգույցը զբաղեցնում է 6,95 հա տարածք Երևանի Արաբկիր համայնքի Թբիլիսյան խճուղի 11/11 հասցեում: Դպրոցն ունի 3 մասնաշենք՝ ընդհանուր 7000 քմ ուսումնական մակերեսով, և զինված ու համալրված է ժամանակակից ուսումնական տեխնոլոգիաներով, ռոբոտիկայի, քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության լաբորատորիաներով, արվեստանոց-լաբորատորիայով, սպորտդահլիճներով և համերգային դահլիճներով: Ամբողջ «Այբ» կրթական ավանը նախատեսված է 800 աշակերտի համար:

«Այբ» կրթական հանգույցի ճարտարապետական յուրօրինակ լուծումները հայ ճարտարապետների և Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի ու Հարվարդի համալսարանի առաջատար մասնագետների ու գիտնականների համատեղ աշխատանքի արդյունք են:

Ճարտարապետական նախագծում հաշվի են առնվել դպրոցաշինության ժամանակակից զարգացումները և համաշխարհային փորձառությունը: «Այբ» կրթական հանգույցը ստեղծված է՝ դառնալու յուրատեսակ կրթական ավան՝ իր բոլոր ենթակառուցվածքներով՝ դպրոց, ֆաբլաբ, գիտության ու տեխնոլոգիայի կենտրոն, եկեղեցի ու համայնքային կենտրոն, մանկապարտեզ, սպորտային համալիր, հանրակացարաններ, կանաչապատ տարածքներ և այլն: Դպրոցում սովորում է 472 աշակերտ (2019 թ. սեպտեմբերի դրությամբ), որոնց թվում են ինչպես ՀՀ, այնպես էլ արտերկրի (ընդհանուր թվի մոտ 10%-ը) քաղաքացիներ:

ՀԱՄԱՅՆՔ. ՄԱՐԴԻԿ

«Այբ»-ի՝ կրթությամբ վերափոխվելու գաղափարը համախմբել է այնպիսի մարդկանց, որոնք կյանքում կայացել են կրթության շնորհիվ և իրենց ժամանակը, ֆինանսական միջոցներն ու հեղինակությունը ներդնում են հայկական կրթության զարգացման գործում: Այն, ինչ երեկ երազանք էր թվում, այսօր իրականություն է շնորհիվ այս մարդկանց ստեղծարար հավատի ու համագործակցության: «Այբ» դպրոցը, որը երկրի կրթական նորագույն զարգացումների ուղենիշ է, կյանքի է կոչվել բազմաթիվ գաղափարակիցների, բարերարների ու աջակիցների վստահության ու ջանքերի շնորհիվ:

ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

«Այբ» դպրոցի բարձրագույն ղեկավար մարմինը հոգաբարձուների խորհուրդն է, որն ունի ցանկացած որոշում կայացնելու կամ վերանայելու լիազորություն: «Այբ» դպրոցը հիմնադրամ է՝ ոչ առևտրային, ոչ պետական կազմակերպություն, որը չունի սեփականատերեր, փայատերեր կամ բաժնետերեր: Դպրոցի տերն այն մարդիկ են, ովքեր կամավոր ստանձնել են հոգատար և պատասխանատու լինելու առաքելության իրենց մասը և համատեղ ջանքերով, հոգաբարձուների խորհրդի միջոցով, կյանքի են կոչում դպրոցի նպատակները: Հոգաբարձուների խորհրդի որոշումները վերջնական են և ենթակա չեն բողոքարկման, քանզի չկա մեկ այլ՝ ավելի բարձր մարմին:

ՀԽ-ում ներգրավված են ինչպես «Այբ» համայնքի, այնպես էլ հասարակական ու մասնագիտական ոլորտների հայտնի ներկայացուցիչներ: 2019 թվականի դեկտեմբերին առաջին անգամ ընտրությունների միջոցով կազմավորվեց դպրոցի ՀԽ նոր կազմը: Այն յուրահատուկ է նրանով, որ առաջին անգամ ՀԽ կազմում ներկայացուցիչ ունեն դպրոցի շրջանավարտների և ուսուցչական համայնքները՝ ի դեմս Արիս Բերբերյանի և Անահիտ Հովհաննիսյանի:

ՌՈՒԲԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

հոգաբարձուների խորհրդի
նախագահ Ռուսաստան

ԱՆԱՀԻՏ ԱԴԱՄՅԱՆ

Հայաստան/Ռուսաստան

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայաստան

ԱՐԹՈՒՐ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

Հայաստան/Ռուսաստան

ԱՐԹՈՒՐ ՋԱՆԻԲԵԿՅԱՆ

(լիազորված անձ՝ Հակոբ
Հակոբյան)
Ռուսաստան



ԱՐԻՍ ԲԵՐԲԵՐՅԱՆ

Հայաստան

ԴԱՎԻԹ ՅԱՆ

(լիազորված անձ՝ Հովհաննես
Աթաբեկյան), Ռուսաստան



ՍԱՐԳԻՍ ԲԱԴԱԼՅԱՆ

Հայաստան

ՎԱՉԳԵՆ ՅԱԿՈՒԲՅԱՆ

Հայաստան

ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայաստան

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

«Այբ» դպրոցում 2018 թվականի դեկտեմբերից գործում է խորհրդատվական խորհուրդ: Կազմում ընդգրկված հեղինակավոր անձանց գիտելիքը և փորձառությունն ընդգրկում են ամենատարբեր ոլորտներ՝ կրթությունից և բարձր տեխնոլոգիաներից մինչև մեդիադաշտ ու մարդասիրություն:

Խորհրդատվական խորհրդի հիմնական գործառույթը դպրոցի ռազմավարական ծրագրերի վերաբերյալ խորհուրդներ և առաջարկներ տրամադրելն է: Խորհրդի ստեղծումն արտացոլում է դպրոցի կատարած ներդրումը կրթության նորարարության ոլորտում և ամրագրում համաշխարհային կրթության զարգացումներին համընթաց քայլելու և Հայաստանի երեխաներին լավագույն կրթության հնարավորություն ընձեռելու՝ «Այբ» դպրոցի տեսլականը:

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

ՆՈՒԲԱՐ ԱՖԵՅԱՆ

Flagship Venture, Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտ

ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

IDEA հիմնադրամ, «Ավրորա» մարդասիրական նախաձեռնություն

ԴԱՎԻԹ ՅԱՆ

ABBYY, iiko

ԹԻՄ ՕՈՒԹՍ

Քեմբրիջի համալսարան

ՓԱՏՐԻԿ ԴԵՐՀԱՄ

Վեստմինստերյան դպրոց

ՄԱՅՔԼ ՌԵՅՍ

Լոնդոնի համալսարանական քոլեջ

ԼԱՐԱ ՍԵԴՐԱԿՅԱՆ

News Deeply, Bloomberg TV, ABC News



ՄԵՍՐՈՊ ՔԵՀՆ. ԱՐԱՄՅԱՆ

Հայաստան

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ԵՎ ԱՆՁՆԱԿԱԶՄ

«Այբ» դպրոցն ունի ավելի քան 190 աշխատակից (ադմինիստրատիվ անձնակազմ, ուսուցիչներ), որոնց մի մասը միաժամանակ ներգրավված է նաև «Այբ»-ի այլ կառույցներում՝ «Այբ» կրթական հիմնադրամում և Դիլիջանի կենտրոնական դպրոցում:

«Այբ»-ի հաջողության գրավականն են մեր ուսուցիչները: Անհնար է պատկերացնել որակյալ կրթական միջավայրն առանց բարձրակարգ մասնագետների: 21-րդ դարի հայկական կրթական միջավայր կերտելու մեր գործին միացել են բազմաթիվ հայտնի մասնագետներ ոչ միայն Հայաստանից, այլև արտերկրից: «Այբ» դպրոցի ուսուցչական կազմը համալրելիս մենք մեր առջև խնդիր ենք դրել դպրոց բերել մարդկանց, ովքեր հասարակական կարևոր ոլորտների ու հաստատությունների լավագույն մասնագետներ են և կարող են ոչ միայն իրենց գիտելիքն ու փորձը փոխանցել աշակերտին, այլև օրինակ դառնալ նրա համար, վառել նրա մեջ ոգման հանդեպ կրակը, սովորեցնել նրան սիրել առարկաները:

Կրթական հանգույցի ստեղծագործական ծրագրերում ներգրավված են տարբեր ոլորտների ներկայացուցիչներ՝ գիտնականներ, արվեստագետներ, գործարարներ՝ ապահովելով դպրոցի կապը կյանքի և տեխնոլոգիաների նորագույն զարգացումների հետ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏՈԿՈՍԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ



ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՆԱԿ

191

76 39,8%

ԱԴՄԻՆԻՍՏՐԱՏԻՎ

115 60,2%

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ



ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ՝ 184

ՌԴ ՔԱՂԱՔԱՑԻ՝ 3

ԱՄՆ ՔԱՂԱՔԱՑԻ՝ 2

ԿԱՄԵՐՈՒՆԻ ՔԱՂԱՔԱՑԻ՝ 1

ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻ՝ 1

ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

Դարերի ընթացքում աշխարհի քաղաքակրթություններում և մշակույթներում ձևավորվել են մարդկային արժեքների որոշակի պատկերացումներ, և շատ հաճախ մարդը սահմանվել է որպես որոշակի առաքինությունների կամ բարոյական չափանիշների կրիչ: Բոլոր ժամանակներում կրթության հիմնախնդիրներից մեկը եղել և մնում է սովորողի արժեքային և որակական նկարագրի կերտումն ըստ տվյալ հասարակության ինքնության, բարոյական չափանիշների և ապագայի տեսլականի:

Դպրոցը՝ որպես մարդու կերտման ու ձևավորման գլխավոր օջախ, ստեղծում են ոչ թե տնօրենը կամ ուսուցիչները, այլ համայնքը, իսկ աշակերտն այդ համայնքի գլխավոր դերակատարն է: Աշակերտի ներդրումը դպրոցաշինության ու համայնքաշինության մեջ նույնքան կարևոր է: Դպրոցի կենտրոնում գտնվում է մարդը՝ աշակերտը՝ իր տեսակով, իր ուրույն նկարագրով, և նրա շուրջ է տարվում ամբողջ աշխատանքը: «Այբ»-ի միջավայրը, որն ապահովում է դպրոցի բոլոր հաջողությունները, ստեղծում են աշակերտները՝ ուսուցիչների, դպրոցի ղեկավարների, հոգաբարձության հետ համատեղ: Աշակերտներն այստեղ ամբողջապես հավասար և լիարժեք համահեղինակ են այն ամենի, ինչ կատարվում է դպրոցում: «Այբ»-ի աշակերտի տեսակն առաջին հերթին իր մեջ պարփակում է մարդկային գլխավոր առաքինությունները: Մեր նպատակն է առաջին հերթին օգնել աշակերտին, որ կայանա որպես առաքինություններով ու արժեքներով օժտված լիարժեք անձ՝ մարդ, որը ձգտում է ճանաչելու, համագործակցելու, արարելու, մարդ, որը մտածող է և ստեղծագործող: Եվ եթե մենք առաջնորդվում ենք մարդակերտման այս սկզբունքով, ապա ստանում ենք ներդաշնակ արդյունք՝ և՛ անձնավորություն, և՛ գիտելիքներ:

ԱԲ-ի աշակերտի նկարագրի ութ սկզբունքները հիմնված են հին հունական փիլիսոփայությունից եկած և քրիստոնեության մեջ ամրագրված չորս մարդկային առաքինությունների վրա, որոնք են խոհականությունը, արիությունը, ողջախոհությունը և արդարությունը: Յուրաքանչյուր առաքինություն մենք բացել ենք իր տեսական-ճանաչողական և գործնական-վարքային իմաստներով՝ ստանալով չորս զույգ կամ ութ սկզբունք: «Այբ» դպրոցի ծրագիրը՝ Արարատյան բակալավրիատը, մշակվել է այնպիսի անհատների սերունդներ կերտելու տեսլականով, որոնց բնորոշ են հետևյալ հատկանիշները:

ՃԱՆԱՉՈՂ ԵՎ ՍՏԵՂԾԱՐԱՐ

Մարդու ճանաչողության և գործերի ներդաշնակեցումը, տեսականի և գործնականի ճիշտ համադրությունը կամ հավասարակշռությունը ԱԲ-ի կրթական փիլիսոփայության «ոսկե կանոնն» է: Ճանաչողությունն ամրապնդվում է փորձառությամբ և պտղաբերում ստեղծագործումով: Իսկ յուրաքանչյուր գործ իմաստավորվում և ամբողջանում է այդ գործից ծնված փորձառական գիտելիքով: ԱԲ-ի աշակերտը ճանաչելով ստեղծում է և ստեղծելով ճանաչում:

ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԵՎ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՎԱԾ

Նախաձեռնողը նա է, ով ոչ միայն ինքնուրույն սկսում կամ ձեռնարկում է որևէ բան, այլև ունի արիություն և համարձակություն՝ սկսածն առաջ տանելու և ավարտին հասցնելու: Սակայն յուրաքանչյուր նախաձեռնության մեջ պետք է լինել հավասարակշռված, այսինքն՝ շրջահայաց, խոհեմ և լուրջ՝ պահպանելով ներքին խաղաղությունը և ցուցաբերելով զսպվածություն: Շրջահայաց նախաձեռնողն անխոհեմ առաջ չի նետվում, այլ պատասխանատվությամբ ծրագրում ու խորհում է, հաշվի առնում ծրագրի բոլոր գործոնները և կողմերը, մարդկանց իր գաղափարի շուրջ հավաքում, ծառայում և առաջնորդում:

ԶԳՈՆ ԵՎ ԲԱՑ

Զգոն նշանակում է ոչ միայն արթուն, աչալուրջ և զգույշ, այլև՝ ներքնապես ուշադիր և հավաքված: Մարդկային կյանքը ցրված է մտքերի, հիշողությունների, զգացմունքների, ապրումների մեջ, և կրթության բոլոր ժամանակների գերխնդիրն է՝ սովորեցնել մարդուն հավաքվել, ուշադիր լինել և կենտրոնանալ: Բաց մարդը զերծ է ներքին կապանքներից և սևեռումներից, հաղորդակից է մարդկանց և ունի իրականության զգացողություն: ԱԲ-ի աշակերտը չի առաջնորդվում սոսկ սեփական հետաքրքրություններով և ցանկություններով, այլ բաց է՝ ունեցածը կիսելու և ուրիշներից իրեն տրված բարիքը շնորհակալությամբ ընդունելու:

ԲԱՐԵԽՈՀ ԵՎ ՀՈԳԱՏԱՐ

ԱԲ-ի աշակերտը պետք է ձգտի ոչ թե պարզապես ճանաչելու, այլ բարի և բարեբեր ճանաչողության կամ բարեխոհության: Բարին խորհելը և բացահայտելը արդյունավետ ճանաչողության վեկտորն են: Մտքերի բարությունը պետք է արտացոլված լինի նաև մեր գործերում՝ ԱԲ-ի աշակերտը պետք է լինի հոգատար: Հոգատար է նա, ով սեր ունի իր մեջ, փորձում է մարդկանց համար բարիք գործել, պատասխանատու է և անտարբեր չի անցնում իրողությունների կողքով: Բարեխոհությունն ու հոգատարությունը բարոյական լրացումն են «ճանաչող և ստեղծարար» հատկանիշների և շեշտում են, թե ինչ տեսակի ճանաչողությունն ու գործերն են օգտակար:

ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՍԵՌԻ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ

ԸՆԴՀԱՆՈՒՐ **472**

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ

141

ԱՇԱԿԵՐՏ



ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑ

136

ԱՇԱԿԵՐՏ

ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

195

ԱՇԱԿԵՐՏ

ԾՆՈՂՆԵՐ

Անհնար է պատկերացնել հզոր դպրոցական համայնք՝ առանց այդ համայնքի կայացման ու զարգացման գործում ծնողների ակտիվ մասնակցության ու ներդրման: Մենք դիտում ենք ծնողին որպես երեխայի ուսման, դաստիարակության ու զարգացման գործում դպրոցի առաջին համագործակցի: «Այբ» դպրոցն ակտիվորեն ներգրավում է ծնողներին երեխաների հետ աշխատանքում: Մշակվել ու հաջողությամբ գործարկվում են հետաքրքիր ձևաչափեր, որոնց շնորհիվ դպրոց-ծնող համագործակցությունը տալիս է բարձր արդյունքներ: Օրինակ՝ սովորական «ծնողական ժողով» ասվածը «Այբ» դպրոցում անցկացվում է ծնող-երեխա-ուսուցիչ անհատական հանդիպման ձևաչափով. ոչ միայն քննարկվում են երեխայի հետ կապված հարցեր, այլև նախանշվում ծնողի դերն ու անելիքը երեխայի կրթության ու զարգացման ճանապարհին: Ամսական թեյախմությունների ձևաչափով քննարկումներն ընթացիկ և կարևոր հարցերի շուրջ պաշտոնական խորհրդակցություն են, որում բարձրացված հարցերն ու դրանց հետքերով կայացված որոշումներն ու դրանց արդյունքները արձանագրվում ու տեղեկացվում են ծնողներին: Այս հարթակների ու ծնողի հետ անհատական շփումների շնորհիվ ձևավորվել է ծնող-դպրոց համագործակցության արդյունավետ մշակույթ:

Ծնողները մասնագիտական կարծիքի տեսքով, անհատապես կամ խմբով, մշտապես աջակցում են դպրոցի ներքին կազմակերպչական գործընթացների և այլ բովանդակային հարցերի շուրջ տարբեր որոշումների կայացմանը:

Ծնողները ներհամայնքային միջոցառումների կազմակերպման ակտիվ մասնակից են. նրանք նույնպես երբեմն հանդես են գալիս կրթական, հասարակական ու ժամանցային զանազան միջոցառումների ու նախաձեռնությունների առաջարկներով: Դպրոցում խթանվում ու քարոզվում են բարեգործությունն ու փոխօգնության մշակույթը, և ծնողներն իրենց օրինակով և կազմակերպած բարի գործերով լավագույն օրինակն են երեխաների համար:

Եվ, վերջապես, մեծ ուրախություն է մեր ծնողներին տեսնել «Այբ» դպրոցի բարերարների թվում, ովքեր կարևոր ու շատ գնահատելի ֆինանսական ներդրում են ունեցել ու շարունակում ունենալ «Այբ» դպրոցի ընդլայնման ու համալրման գործում այդպիսով նպաստելով ոչ միայն սեփական երեխայի, այլև նրանից հետո դպրոց եկող սերունդների համար ուսումնական լավագույն պայմանների ապահովմանը:

ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐ

Դպրոցի 9-ամյա պատմության ընթացքում «Այբ»-ը տվել է 370 շրջանավարտ (2020 թ. հուլիսի դրությամբ): Այսօր նրանք սովորում են Հայաստանի և արտերկրի հեղինակավոր բուհերում՝ բարձր պահելով դպրոցի անունը և «Այբ»-ի շրջանավարտի պատվավոր կոչումը: «Այբ»-ի շրջանավարտները դպրոցն ավարտելուց հետո շարունակում են ակտիվ մասնակցել «Այբ» համայնքի կյանքին՝ ընդգրկվելով «Այբ»-ի շրջանավարտների համայնքում, մասնակցելով դպրոցի և հիմնադրամի կողմից իրականացվող մի շարք նախաձեռնությունների, ինչպես նաև համալրելով «Այբ»-ի կառույցների անձնակազմի շարքերը:

2020 թվականին շրջանավարտները նաև ձեռնամուխ եղան «Այբ»-ի շրջանավարտների ակումբի ստեղծմանը: Նպատակը շրջանավարտների համայնքի կայացմանն ու «Այբ»-ի հետ նրանց կապի պահպանմանը նպաստելն է և նրանց ներուժի դրսևորման ու զարգացման համար պարարտ հող ստեղծելը: Շրջանավարտների ակումբի կողմից իրականացվող ծրագրերն ուղղվելու են ընկերական մենտորության համակարգի զարգացմանը, ուսումնական գործընթացում ուսուցիչների և աշակերտների աջակցությանը, ինչպես նաև այլ հետաքրքիր միջոցառումների անցկացմանը: Լիահույս ենք, որ ակումբը կկազմավորվի ու կկայանա՝ նոր գույներով երանգավորելով «Այբ»-ի համայնքը:

«Այբ»-ի շրջանավարտները նաև հանդես են գալիս տարբեր նախաձեռնություններով: Այսպես՝ 2013-ին շրջանավարտներն իրականացրել են «Հավես ամառ» և «Հավես աշուն» ուսումնական նախագծերը, իսկ 2016-2019 թթ. շրջանավարտների համայնքը կազմակերպել է «Այբ»-ի ամանորյա ավանդական տոնավաճառը: «Այբ»-ի շրջանավարտները հաճախ նաև փորձի և գիտելիքի փոխանակման հանդիպումներ են ունենում դպրոցի աշակերտների հետ, հաղորդակից դարձնում իրենց փորձին և օգտակար խորհուրդներ տալիս:

Շրջանավարտներից ոմանք դարձել են «Այբ»-ի աշխատակիցներ՝ համալրելով ադմինիստրացիայի, դպրոցական մրցույթների, ֆաբլաբի և ՏՏ թիմի շարքերը: Նրանք կամավորական սկզբունքով պարբերաբար ընդգրկվում են «Այբ»-ի տարբեր կառույցներում իրականացվող նախագծերում, ինչպես նաև մասնակցում փորձնակության առաջարկվող ծրագրերին: «Այբ»-ի ապագայի տեսլականի վառ ապացույցը շրջանավարտներն են, որոնք դեռ նոր են ծիլեր նետել մեր հասարակությունում և նոր են սկսում ծաղկել՝ վարակելով շրջապատին իրենց արժեհամակարգով և ապագայի նկատմամբ հստակ պատկերացումներով ու ձգտումներով:



ԴՊՐՈՑԻ ԿՅԱՆՔԸ

2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ

2019-2020 ուսումնական տարին նշանավորվեց հիշարժան իրադարձություններով:

Այն անցավ ուսումնական այցերով ու հյուրերով ինչպես դպրոցում, այնպես էլ՝ առցանց:

Այբական տարին լի էր ինչպես ծեռքբերումներով, այնպես էլ՝ մարտահրավերներով, որոնք հաղթահարեցինք միասնական ուժերով: 2019-2020 ուսումնական տարին նշանավորվեց հիշարժան իրադարձություններով, ուսումնական այցերով ու հյուրերով, որոնց ընդունեցինք ինչպես դպրոցում, այնպես էլ՝ առցանց:

ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Այբ» դպրոցում տեղի ունեցավ «Ռուսալ» գիտության փառատոնի բացումը: Անցկացվեց ինժեներական քվեստ: Այնուհետև «Այբ» դպրոցը մասնակցեց «Ռուսալ» փառատոնի՝ ազգային պոլիտեխնիկական համալսարանում բացված ցուցահանդեսին:

Այբական ռոբոտները «գրավեցին» WCIT 2019-ը: Հեղինակավոր ֆորումին «Այբ» դպրոցը ներկայացված էր ԿԳՄՍ նախարարության միասնական «Հայաստան» տաղավարում:

«Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոն Հայաստանի» և «Այբ» դպրոցի նախաձեռնությամբ ու գործակցությամբ «Այբ» դպրոցում արդեն 6-րդ տարին անընդմեջ կայացավ «Ծրագրավորման ժամ» (Hour of Code) միջոցառումը:

Հյուրընկալեցինք Digital UAV Forum 2019-ի դպրոցական մասը:

«Ռոլան» 15-րդ մանկապատանեկան ֆիլմերի միջազգային փառատոնին մասնակցեց նաև «Այբ» դպրոցի Film Factory ակումբը: Մեր աշակերտները ժյուրիի կազմում էին, ինչպես նաև ցուցադրվեցին նրանց պատրաստած ֆիլմերը:

«Այբ» դպրոցը մասնակցեց «Ավրորա» Ֆորումի Արձրձ Challenge փառատոնին: Մեր աշակերտները ներգրավված էին նաև փառատոնի կամավորական աշխատանքներում:

«Այբ» դպրոցում տեղի ունեցավ Պատանի քիմիկոսների համահայկական 10-րդ մրցաշարի քառորդ եզրափակիչ փուլը, որտեղ իրենց ուժերն էին չափում 40 թիմ Հայաստանի Հանրապետության և Արցախի 29 դպրոցներից:

«Այբ»-ում անցկացվեց Выходи решать! համառուսական օլիմպիադա դպրոցի աշակերտների համար: Օլիմպիադան անցկացվեց մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա առարկաներից:

Տեղի ունեցան 7-րդ Այբական խաղերը. մրցեցինք տարբեր մարզաձևերում, առաջին անգամ նաև սումո «խաղացինք», «թռանք» զիպլայնով, կերանք ավանդական հարիսա ու պարեցինք:

Կայացավ «Այբ»-ի ամանորյա տոնավաճառը: Տոնական միջոցառման կազմակերպիչները դպրոցի շրջանավարտներն էին:

Վայելեցինք աշակերտների «Տաղանդների շոու 2020» համերգային միջոցառումը:

«Այբ» դպրոցում տեղի ունեցավ «Լորիկ» ֆիլմի բացառիկ ցուցադրությունը: Ֆիլմի պրոդյուսերն է «Այբ»-ի բարերար, բարեկամ Մարտիրոս Մինասյանը:

Ծնողական ներհամայնքային հանդիպում կազմակերպեցինք: Նպատակն էր կապերի ամրապնդումն ու ընդլայնումը դպրոցի աշակերտների, ծնողների և «Այբ» համայնքի այլ անդամների միջև:

Ժուկով-ժամանակով «Այբ»-ում էր հայտնվել Քաջ Նազարը. «Այբ»-ում Ամանորի ավանդական հանդիսությունն էր:

Հետաքրքիր ֆլեշմոբով շնորհավորեցինք մեր աշակերտներին կամավորի միջազգային օրվա առթիվ:

Շրջանավարտների նախաձեռնությամբ «Այբ»-ում նշեցինք Գոհաբանության օրը:

Բասկետբոլային խաղ, թեյախմություն ու մտքերի փոխանակում. այսպես մեկնարկեց «Այբ» դպրոցի և Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միության երկարաժամկետ համագործակցությունը:

ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Այբ» ավագ դպրոցի 12-րդ դասարանի 8 աշակերտ և պատմության 2 ուսուցիչ Մեծ Բրիտանիայում մասնակցեցին աշակերտական կոնֆերանսի: Աշակերտները մեկ տարի շարունակ Վեստմինստերյան դպրոցի իրենց հասակակիցների հետ հեռակա նախագիծ էին իրականացրել, որոնց արդյունքներն էլ ամփոփվեցին Գլադստոնի գրադարանի հետ համատեղ անցկացված կոնֆերանսի ընթացքում:

5 աշակերտներ էլ ուսուցչուհի Անուշ Լալայանի ուղեկցությամբ ուսումնական այց կատարեցին Գերմանիա՝ ամփոփելու Սաքսոնիա-Անհալթ երկրամասի Պֆորտայի դպրոցի հետ անցկացվող եռաչափ մոդելավորման նախագիծը:

«Այբ» դպրոցի համայնքի գծով տնօրեն Աննա Ակոպյանն ու մասնագիտական կողմնորոշման մասնագետ Ռուզաննա Մայիլյանը մասնակցեցին Իսպանիայի Բիլբաո քաղաքում անցկացվող Միջազգային դպրոցների խորհրդի (CIS) ամենամյա համաժողովին՝ ներկայացնելով «Այբ» դպրոցն ու «Արարատյան բակալավրիատ» կրթական ծրագիրը:

«Սահմանելով կրթության նոր տեսլականը». «Այբ» դպրոցի տնօրեններ Արամ Փախչանյանը, Դավիթ Սահակյանը և Մերի Հովսեփյանը մասնակցեցին Արցախի «Կրթական ֆորում 2019»-ին:

«Այբ» դպրոցի աշակերտները տնօրեն Արամ Փախչանյանի գլխավորությամբ Արցախում մասնակցեցին «Լույսի մոլորակ» փառատոնին:

ԱՅԲԱՊԱՏՈՒՄ

«Այբ»-ը՝ մարզերում, մարզերը՝ «Այբ»-ում. այս սկզբունքով է իրականացվում «Այբապատում» նախագիծը, որի շրջանակում «Այբ»-ում հյուրընկալել էինք Ներքին Ծաղկավանի, Ներքին Կարմիրաղբյուրի, Բերքաբերի և Գետաշենի դպրոցականներին:

Իսկ առցանց հարթակում «հյուրընկալվեցինք» Կարմիրաղբյուր ու Ներքին Ծաղկավան գյուղերի դպրոցներում: «Այբ» դպրոցի աշակերտները հանդես եկան առցանց ուսուցչի դերում:

ՀՅՈՒՐԵՐ

Հյուրընկալեցինք

ՌԴ դաշնային հարկային ծառայության նախկին ղեկավար, հետագայում ՌԴ վարչապետ Միխայիլ Միշուստինին, որն «Այբ» դպրոց այցելեց բարերար Արթուր Ջանիբեկյանի ուղեկցությամբ:

Ուսուցչի տոնի առիթով «Այբ» դպրոցում հանդիպեցինք և լսեցինք Տեր Մեսրոպ քահանա Արամյանին, որը խորհուրդ տվեց «գնալ դեպի անծանաչելին և լուծել անլուծելին»:

ՄԻԽԱՅԻԼ ՄԻՇՈՒՍՏԻՆ

ՌԴ վարչապետ



ԱՐԹՈՒՐ ՋԱՆԻԲԵԿՅԱՆ

«Այբ»-ի բարերար



ՏԵՐ ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱ ԱՐԱՄՅԱՆ

Հյուրընկալեցինք «Այբ»դպրոցի համահիմնադիր Դավիթ Յանին և կոնեկտիկուտի համալսարանի պրոֆեսոր, ֆիզիկոս Ռայան Քոֆիին:

«Այբ»-ում բացառիկ հնարավորություն ունեցանք ունկնդրելու և զրուցելու հայտնի երաժիշտ Լևոն Օգանեզովի հետ:

«Այբ»-ում «Անկեղծության պահ» էր Հրանտ Թոխատյանի համար:

Հայաստանի ամերիկյան համալսարանի նախագահ Կարին Մարկիդեսի հետ հանդիպեցինք դպրոցի «Հայաստան» դահլիճում:

«Այբ»-ի աշակերտների համար վարպետության դաս անցկացրեց նկարիչ Գևորգ Մուրադը:

ԴԱՎԻԹ ՅԱՆ

«Այբ»դպրոցի համահիմնադիր

ՌԱՅԱՆ ՔՈՖԻ

Ֆիզիկոս



ԼԵՎՈՆ ՕԳԱՆԵԶՈՎ

հայտնի երաժիշտ



ՀՐԱՆՏ ԹՈԽԱՏՅԱՆ

Դերասան

ԿԱՐԻՆ ՄԱՐԿԻԴԵՍ

Հայաստանի ամերիկյան
համալսարանի նախագահ



ԳԵՎՈՐԳ ՄՈՒՐԱԴ

Նկարիչ

«Այբ»-ում կինոյի մասին հարցեր ուղղեցինք ռեժիսոր Միեր Մկրտչյանին:

Գրականության նախագծային ուսումնառության շրջանակում աշակերտների հրավերով դպրոց այցելեց ժամանակակից գրող Արամ Պաչյանը:

Համալսարանական կյանքի մասին խոսելու համար «Այբ»-ի աշակերտների հետ հանդիպեցին «Այբ»-ի նախորդ տարիների շրջանավարտները:

«Այբ»-ում կայացավ Պաատա Ամոնաշվիլիի՝ մարդասիրական մանկավարժության մասին սեմինարը:

Այբեցիներն առցանց հանդիպեցին ՀՀ ԱԺ պատգամավոր Մխիթար Հայրապետյանի հետ՝ քննարկելու առցանց ուսուցման և դրա կազմակերպման հետ կապված մի շարք կարևոր և օրակարգային հարցեր:

ՄԻԵՐ ՄԿՐՏՉՅԱՆ

ռեժիսոր



ԱՐԱՄ ՊԱՉՅԱՆ

ժամանակակից գրող

ՊԱԱՏԱ ԱՄՈՆԱՇՎԻԼԻ

ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀՀ ԱԺ պատգամավոր



«ԱՅԲ»-Ի ՆԱԽՈՐԴ ՏԱՐԻՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐ

ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԵԶ ԱՅՑԵԼԵՑԻՆ ՏԱՍՆՅԱԿ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ ՈՒ ՄԱՐԶԵՐԻՑ

Այսպես՝ հյուրընկալեցինք «Սկոլկովո» հիմնադրամի փոխնախագահ Ելենա Զելենցովային և հիմնադրամի քաղաքային շրջակա միջավայրի վարչության ղեկավար Անաստասիա Զելենովային, «Хорошкола»-ի հիմնադիր Յանա Գրեֆին և դպրոցի տնօրինությանը, Կազանի դաշնային համալսարանին կից գործող Լոբաչևսկու անվան լիցեյի տնօրենին և ուսուցիչներին, «Золотое сечение» և «Умная школа» դպրոցներից կրթության մասնագետների, ուսուցիչների, շինարարների ու ծարտարապետների, «Новая школа» դպրոցի 5-7-րդ դասարանների աշակերտներին ու ուսուցիչներին, Ներքին Ճաղկավանի, Աքորիի, Ներքին Կարմիրաղբյուրի դպրոցների ուսուցիչների: Վերջիններս ներկա եղան դասալսումների, ինչպես նաև մասնակցեցին «Այբ»-ի ուսուցիչների համար պարբերաբար կազմակերպվող վերապատրաստումներին:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ «ԱՅԲ»-ՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵՑԻՆՔ

Ամերիկյան Մինեսոտայի համալսարանի, ՀԱՀ-ի, Հոնկոնգի համալսարանի, Նավարայի համալսարանի, Մոսկվայի ավիացիոն ինստիտուտի, Մոսկվայի պոլիտեխնիկական համալսարանի ներկայացուցիչներին: «Այբ» ավագ դպրոցի աշակերտները մասնագիտական կողմնորոշման նպատակով այցելեցին Հայաստանում Ֆրանսիական համալսարան, իսկ դպրոցում աշակերտներին ներկայացվեցին «1991 ստորաբաժանում» և «Պատիվ ունեմ» ծրագրերը:

ՆՎԱՃՈՒՄՆԵՐ

«Այբ» ավագ դպրոցի աշակերտներ Դավիթ Գրիգորյանը, Լիլիթ Մինասյանը, Սուրեն Թադևոսյանը արժանացան ՏՏ ոլորտի լավագույն աշակերտի պետական մրցանակի:

Բնության մեջ կենսաքայքայվող պոլիմերների ստեղծման եղանակը, որ մշակել են նախագծային ուսումնառության «Կանաչ քիմիա» ակումբի աշակերտները, ստացավ գյուտի արտոնագիր Մտավոր սեփականության գործակալության կողմից և հրապարակվելու է ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական տեղեկագրում:

«Այբ» դպրոցի համահիմնադիր, գործադիր տնօրեն և «Այբ» կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Արամ Փախչանյանը դարձավ «Rybakov Prize 2020»-ի դափնեկիր:

«Այբ» դպրոցը ներկայացնող VR Lab թիմը հայտնվեց «Սերունդ առանց սահմանների» (ՇԶՈՍ) մրցույթի լավագույն հնգյակում: Մրցույթին ներկայացված 60 նախագծերից ընտրվել են միայն 12-ը:

«Այբ» դպրոցի աշակերտներ Ալիսա Փախչանյանը, Էթերի Սարգսյանը, Մերուժան Խաչատրյանը, Սուրեն Թադևոսյանը, Լանա Մելիքյանը, Անի Հարությունյանը, Անի Հարությունյանը, Մերի Ստեփանյանը, Լուսինե Խաչատրյանը դարձան հանրապետական առարկայական օլիմպիադայի եզրափակիչ փուլերի հաղթողներ:

«Այբ» դպրոցի և Դիլիջանի կենտրոնական դպրոցի շենքերը ճանաչվեցին Build School Project ճարտարապետական մրցույթի հաղթողներ: Իսկ ArchDaily-ն «Այբ» և Դիլիջանի կենտրոնական դպրոցների շենքերն ընդգրկեց վերջին 10 տարվա հայկական ճարտարապետության ժամանակակից նախագծերի թվում:

«Այբ» դպրոցի ռուսերենի ուսուցչուհի Կիմա Վանեսքեհյանը հայտնվեց «Заказай знания!» ուսուցչական վարպետության միջազգային մրցույթի եզրափակիչում: Նա այս մրցույթի գիտության դեսպանն էր Հայաստանից:

ԿԱՐԵՎՈՐ ՓԱՍՏԵՐ

472
ԱՇԱԿԵՐՏ
195-Ը
ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ

«Այբ» դպրոցը 2019-2020 ուսումնական տարին մեկնարկեց 472 աշակերտով, որոնցից 195-ը՝ ավագ դպրոցում:

70
ԱՇԱԿԵՐՏ

«Այբ» դպրոցն ավարտեց 8-րդ սերնդի 70 աշակերտ: Այդպիսով՝ «Այբ» դպրոցն ունեցավ ընդհանուր 370 շրջանավարտ:

79%-Ը
ՍՏԱՑԱՎ ԿՐԹԱԹՈՂԱԿ

Այս ուսումնական տարում «Այբ» ավագ դպրոցի աշակերտների 79%-ը ստացավ կրթաթղթակ (ուսման վարձի փոխհատուցում):

ԱՌՑԱՆՑ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

«Այբ»-ը հաջողությամբ ներդրեց առցանց կրթության համակարգը, որի փորձը կօգնի արդեն 2020-2021 ուսումնական տարում մեկնարկելու «Այբ2.0» հեռավար կրթության լայնածավալ ծրագիրը:

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆՈՐ ԿԱԶՄ

Կազմավորվեց «Այբ» դպրոցի հոգաբարձուների խորհրդի նոր կազմը, որն աշխատանքները սկսել է 2019 թ. դեկտեմբերի 1-ից և կպաշտոնավարի մինչև 2021 թ. նոյեմբերի 30-ը:

ՎԵԲԻՆԱՐՆԵՐ

Ստեղծված արտակարգ իրավիճակում «Այբ» դպրոցը ձեռնարկեց հեռավար ուսուցման մասին վեբինարների շարք: Դրանք տևեցին ավելի քան մեկ ամիս և անցկացվեցին ուսուցիչների ու աշակերտների կողմից:

Ֆինանսական հաշվետվություն

2019-2020

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	ՀՀ դրամ
Գործառնական գործունեությունից ներհոսք	991,617,523
Ներհոսք ուսման վարձերից	910,357,222
«Այբ» կրթական հիմնադրամի նվիրատվություններ դպրոցի դեֆիցիտի ծածկման համար (կրթաթոշակային ֆոնդ)	31,231,558
Նպատակային և կանոնադրական նպատակների համար նվիրատվություններ	37,906,132
Ներհոսք ենթակառուցվածքներից և ծառայությունների մատուցումից	10,928,529
Աշակերտներին վերաբերող այլ մուտքեր	1,194,082
Գործառնական գործունեությունից արտահոսք	983,925,478
Վարչական ծախսեր	368,753,559
Վարչական անձնակազմի ծախսեր, այդ թվում աշխատավարձային ֆոնդ, սոցիալական փաթեթ և վարչական աշխատողների զարգացման ծախսեր	264,722,383
Կոմունալ ծախսեր, դպրոցի գույքի և շրջակա միջավայրի պահպանում և բարեկարգում	76,941,509
Դպրոցի ՏՏ համակարգի պահպանում և բարելավում	2,630,377
Մարկետինգ, հաղորդակցություն և ֆոնդահայթայթում	2,244,478
Մասնագիտացված ծառայությունների արտապատվիրում	16,327,582
Գրասենյակային, ներկայացուցչական ծախսեր և այլ վարչական ծախսեր	5,887,230
Կրթական գործընթացի ուղղակի ծախսեր	609,560,676
Ուսուցիչների և կրթական գործընթացին աջակցող անձնակազմի աշխատավարձային ֆոնդ	459,412,809
Աշակերտների ծախսեր (գրականություն, սնունդ, տրանսպորտ, կեցություն, ծրագրային ծախսեր, լող և այլն)	147,073,709
«Այբ» համայնքին ուղղված միջոցառումների ծախսեր	3,074,158
Այլ նախագծերի ուղղակի ծախսեր	5,611,243
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	
Ներդրումային գործունեությունից ներհոսք, այդ թվում կապիտալ շինարարության և վերանորոգման, հիմնական միջոցների ձեռքբերման նպատակով ստացված նպատակային նվիրատվություններ	142,800,000
Ներդրումային գործունեությունից արտահոսք, այդ թվում նոր շինարարություն և կապիտալ վերանորոգում, սարքավորումների և այլ հիմնական միջոցների ձեռքբերում	38,306,707
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների ներհոսք, այդ թվում ներդրված ավանդներից տոկոսագումարներ և նախկինում տրամադրված փոխառությունների վերադարձ	14,970,712
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների արտահոսք, այդ թվում ստացված փոխառությունների մարում և փոխառությունների տրամադրում	28,152,903
Սկզբնական մնացորդ 2019 թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ	4,089,874
Ընդամենը՝ ներհոսք՝	1,149,388,236
Ընդամենը՝ արտահոսք՝	1,050,385,088
Վերջնական մնացորդ 2020 թ. օգոստոսի 31-ի դրությամբ	103,093,022*

* «Այբ» դպրոցի բարերարների, համախմբված համայնքի և «Տաշիր» բարեգործական հիմնադրամի 142.8 մլն ՀՀ դրամ նվիրատվությունների շնորհիվ դպրոցին հաջողվել է պահպանել ֆինանսական կայունությունը 2019-2020 ուսումնական տարում: Մնացորդային ամբողջ գումարը նախատեսվում է օգտագործել դպրոցի զարգացման ծրագրերի վրա 2020-2021 ուսումնական տարում:

Կրթաթոշակային համակարգ

Ավագ դպրոցի աշակերտների 75%-ն
ամեն տարի «Այբ» հիմնադրամից
ստանում է կրթաթոշակ:

«Այբ» դպրոցի ավագ բաղադրիչը ոչ պետական կրթության ոլորտում առաջին սոցիալական ծրագիրն է: Մենք մեր դպրոց ընդունված բոլոր աշակերտներին տալիս ենք «Այբ»-ում սովորելու հավասար հնարավորություններ. «Այբ» հիմնադրամը հայթայթում է ֆոնդեր անհատ բարերարների ու կազմակերպությունների նվիրատվություններից, որպեսզի որևէ աշակերտ, որ ընդունվել է «Այբ» ավագ դպրոց, չզրկվի այստեղ սովորելու հնարավորությունից ֆինանսական պատճառով: «Այբ» ավագ դպրոցի աշակերտների ավելի քան 75%-ն ամեն տարի «Այբ» հիմնադրամից ստանում է կրթաթոշակ (ուսման վարձի մասնակի կամ ամբողջական փոխհատուցում)՝ համաձայն ֆինանսական աջակցության տրամադրման սկզբունքների և նպատակների:

ԻՆՉՊԵՍ ԱՋԱԿՑԵԼ ԴՊՐՈՑԻՆ

Ավելի քան 200 անհատ միավորել են իրենց ջանքերը հանուն կրթության զարգացման:

«Այբ» դպրոցը շահույթ չհետապնդող ոչ առևտրային կազմակերպություն է, որ ստեղծվել է աշխարհի տարբեր անկյուններում ապրող ու աշխատող մարդկանց նվիրաբերությունների շնորհիվ: Ավելի քան 200 անհատ միավորել են իրենց ջանքերը, գիտելիքները, ֆինանսական և ժամանակային ռեսուրսները, պատասխանատվությունն ու սերը հանուն հայկական կրթության զարգացման, հանուն սերնդակերտման բարդ և շնորհակալ գործի: Մենք ունենք քո օգնության կարիքը «Այբ» դպրոցի հետագա զարգացման ու ընդլայնման համար: Մենք արդեն հավաքել ենք բավարար միջոցներ դպրոցի մասնաշենքերի շինարարության և համալրման, լաբորատորիաների ստեղծման և ամենաժամանակակից ուսումնական նյութերի մշակման համար: Այս ամենի շնորհիվ այսօր ավելի քան 450 աշակերտ ուսանում է «Այբ» դպրոցում, հաղթում ու պատվով ներկայացնում Հայաստանը միջազգային օլիմպիադաներում, ուսումը շարունակում աշխարհի լավագույն բուհերում, փոփոխություններ բերող ծրագրեր իրականացնում արդեն այսօր: Միացի՛ր «Այբ» դպրոցի ծրագրին, կատարի՛ր փոփոխություն հիմա, դարձրո՛ւ աշխարհին ավելի լավը:

ՆՎԻՐԻՐ

$150 — Երեխաները կունենան նոր նյութեր ու սարքավորումներ գիտության իրենց դասերի համար:

$600 — Հովանավորիր 1 տաղանդավոր երեխայի 1 ամսվա ուսումն «Այբ» դպրոցում:

$6000 — Մեկ աշակերտ ամբողջ տարի կսովորի «Այբ»-ում հենց քո շնորհիվ:

$50.000 — Քո անունով կոչիր մեկ լսարան «Այբ» դպրոցի նոր մասնաշենքում:

$100.000 — Դարձիր «Այբ» կրթական հանգույցի միջոց-դրամագլխի բարերար:

Եթե ունես «Այբ» դպրոցին աջակցելու այլ առաջարկ, գրիր մեզ donation@ayb.am հասցեով, և միասին կքննարկենք ամենահարմար տարբերակը:

Նվիրաբերի՛ր

ՄԵՐ ԱՋԱԿԻՑՆԵՐԸ

Դժվար է գտնել երախտագիտության և հիացմունքի խոսքեր այն մարդկանց հանդեպ, որոնց շնորհիվ «Այբ» դպրոցն արդեն ինը տարի գոյություն ունի, զարգանում է և նոր ծրագրեր իրականացնում մեր երկրի ապագան կրթությամբ վերափոխելու առաքելությամբ: Մեր բարերարների ու աջակիցների թիվն անցել է երկու հարյուրի սահմանը՝ երկու հարյուր վառ անհատականություն աշխարհի տարբեր երկրներից, երկու հարյուր գաղափարակից, ովքեր իրենց ժամանակն ու ֆինանսական ռեսուրսները ներդրել են ի շահ հայկական կրթության մրցունակության մեծացման, ի շահ ռայալ ու առաքինի սերունդների կերտման: Երկու հարյուր մարդ հավատացել է «Այբ»-ի նպատակներին, երկու հարյուր մարդ կիսել է մեզ հետ մեր գործի հանդեպ նվիրումն ու սերը: Մեր ծրագրերի հաջողության հիմքը հենց այս անձանց արժեքների, փորձառության, հնարավորությունների, պատասխանատվության այն ընդհանուր հզոր ազդեցությունն է, որի շնորհիվ անգամ անիրատեսական թվացող նպատակները դառնում են շոշափելի:

2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԿՐԹԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԵՎ «ԱՅԲ» ԴՊՐՈՑԻ ԽՈՇՈՐ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԸ

«ԱԶԱԴ» ՀԻՄՆԱԴՐԱՄ	«ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ	«ԱՅԲ» ՀԱՄԱՅՆՔ*	«ԱՐԻԴԵՍ» ՍՊՈՐ	ԱՐՏԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԴԱՎԻԹ ՅԱՆ	«ԶԻԳԶԱԳ» ՍՊՈՐ	Հ.Բ.Ը.Մ ՀԻՄՆԱԴՐԱՄ	ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍՅԱՆ	«ՄԻԿՇԻՆ» ՍՊՈՐ
«ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՔԲԸ	ՌՈՒԲԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	«ՎԱՐԴԱՆՅԱՆ ԸՆՏԱՆԻՔ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ	ՎԻԿՏՈՐ ԱԿՈՒԼՅԱՆ	«ԲԱՐԻ ԸՆԹՐԻՔ» ՆԱԽԱԳԻԾ

* Այբական խաղերի և Ամանորի բարեգործական տոնավաճառի դրամահավաքներ

«Այբ» դպրոց
Թբիլիսյան խճ. 11/11
Երևան 0052, Հայաստանի Հանրապետություն
094546498
096500456
www.aybschool.am

DESIGN CONCEPT BY:
FACTORY